



# Ա Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ա Վ Ա Կ Ա Վ Ա Կ  
Ե Ր Ա Վ Ա Կ Ա Վ Ա Կ

Վ Ե Շ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Բ  
Հ Ա Յ Ա Ն Մ Խ Ե Մ Ե Ս Յ



Յ Ե Ր Ա Վ Ա Կ Ա Վ Ա Կ  
Ի Տ Պ Ա Ր Ա Ն Մ Խ Ե Մ Ե Ս Յ  
1871



Ա Մ Ս Ա Գ Ի Ռ

Վեցերորդ Տար  
Թիվ 3.

Տար 31.  
1871.

Ա Զ Գ Օ Յ Ի Ն , Բ Ա Ն Ս Ս Ե Ր Ա Կ Ո Ւ Ե Խ Գ Ր Ա Գ Ի Տ Ա Կ Ո Ւ

Ս Ի Մ Ո Ւ Գ Ե Տ Ր Ո Ս (\*)

Եթէ ասենք որ Ամմանը լիմ էր ,  
որուն վրայ պիտի շնուռէր Յիսուսի  
Քրիստոսի կեղեցին , դարձեալ կա-  
րող չենք պնդել , որ Պետրոս պիտի  
լինէր առաքելապետ կամ առաքելոց  
առաքեալ , և միայն ինքն էր զրահա-  
ւորուած անսխալտականութեան զրու-  
հով իւր ընկերակից աշոկերուաց մէջ  
որոնք ամենքը վրայ էին Յիսուսի Քը-  
րիստոսի յարութեանը և հազարդակից  
էին Հոգւոյն Արքոց նորհացը և լու-  
սոյն : Կարող չենք պնդել , որ Պետրոս  
առաքելապետ պիտի լինէր , վասն զի  
Յիսուսի խօսքերուն մէջ ամենեւին  
պդպիտի խմաստ քիոյ : Խակ եթէ ա-

ռաքելական Եկեղեցւոյ պատմութեա-  
նը հաւատալով՝ Պետրոսին ըստ տանք  
առաքելապետութեան իրաւունք , և  
միայն իւր ամռուին եւ յաջորդացը  
տանք , (այնպէս համարելով թէ ա-  
թոռ և յաջորդներ ունի , ) եթէ Յի-  
սուսի այս սպարզ խօսքը - Դու Խ Ա Տ-  
Ե Ւ Ֆ Ե Ր Ա յ Ա Ր Ա վ Ֆ Ե Շ Ե Ւ Վ Ա Շ Ե Շ Ի Խ-  
այնպէս մեկնենք , որ ոչ թէ Պետրո-  
սին , այլ Պետրոսին զատ , Համբայ-  
բորբ եպիսկոպոսները նոյն խոսաման  
ժառանգորդներն են , որ Պետրոսին  
տրուեցաւ , և նոքա միայն իրենց ան-  
ձին մէջկ'ամփոփեն գերիշխանութիւն  
ամեն ամռուոց և համայն առաքելոց .  
եթէ ասենք որ Յիսուսի խօսքերը Պետ-  
րոսի նկատմամբ անհան են , բայց

(\*) Ծարուշակութիւն , տես թիվ 2:

իւր յաջորդաց համար գերիշխանութեան նշանակութիւն ունին, այսպիսի թիւր դատողութեամբ իրաւունքը մեկնութեան վրայ հաստատած կը լինինք և ոչ թէ մեկնութիւնը՝ իրաւանց, այսինքն չը կարենալով Ա. Գրոց բնագիրներուն վրայ մարդկային չէնք կառուցանել նոցա իմաստը կը փոխենք և մեր ձեռակերտին կը յարմարեցնենք. կամ աւելի պարզ ասել, մեր մարդկեղէն կարգադրութեան կամ չէնքին մէջ աստուածային խօսքերու իմաստ կը փնտառենք, փոխանակ աստուածային խօսքերու մէջ մեր հիմնարկութեան վճիռը փնտռելու: Իսկ և իսկ սոյն ձանապարհաւ կընթանան եպիսկոպոսունք Հռովմայ, որոնք ոչ թէ աստուածային խօսքի վրայ կը հիմնեն Պապական իշխանութիւնը, այլ Աստուծոյ խօսքը կը ջանան հիմնել Պապական իշխանութեան վրայ: Այսպէս ահա քրիստոնէական սկզբունքները թիւր մեկնելով՝ կը կործանեն և կը տապալեն հաւատոյ հիմունքը, կը թիւրեն Ա. Գրոց իմաստը ամենասոսկալի և քմածին մտահաճութեամբ. կը բառնան ամեն կնիք սրբութեան, կը պատռեն ամեն ցանկ և պատռար ամբը ծութեան և լայն տապարեզ կը բանան, որ Ճշմարտութիւնը ուժնակոխ լինի և կատաղաբար յորդեն այլանդակ կասկածներ և տարակյաներ ընդդէմ Աւետարանի: Ոիսվ բանիւ, չութիւն մի յանդկնաբար հաստատել ջանալով, իրաւունք կուտան ամենակերպ ուրացութեանց և բացասութեանց: Կատ բաներ կան, բայց մենք չենք ուղեր երկարել մեր խօսքը: Պապականաց փաստաբանութիւնքը առանց փաստի են և առանց ապացուցի: Եղքա Ճշմարտութիւնը փոխած են ստութեան, և յայոնի ըյոցը

վարագուրած են խաւարամիտ մեկնութեամբ, որով և ամենասպարզ մըտքերը երկրացութե հողմերուն մատնած են և ամենահաստատ ոգիները ալեկոծ և յազդողդ վիճակի հաստացած: Այս ահա այս է բուն պատճառըն, որ սկեպտականութիւն կամ մըտաւոր վարանքը յորդան տալով մուտքործած է թէ Ակեղեցւոյ մէջ և թէ ընկերականութեան:

Այսպէս ուրեմն, Յիսուսի խոստումն առ Ոիմն ամենեւին չունի և կարող չէր ունենալ այն տարապայման իմաստը, զոր հնարեցին թիւր մեկնիչք: Բայց ի հարկ է մեր Փրկչի խօսքերը անշուշտ իմաստ մի ունին: Այս միթէ ինքնին բացայատ չչ այս իմաստը, և ինչ հարկ կայ երկար որոնելու:

Աթէ Աւետարանիները և Պործոց պատմիչը հաւասար տեսութեամբ կը նային Պետրոսի վրայ, ինչպէս միւս Աւետից վրայ, այս մասին բնաւ պիտի չը զարմանանք և պիտի չը կարծենք թէ՝ Յիսուսի մարդարէութիւն նշանակութիւն չունէր: Աթէ ոչ բոլորովին, գէթ մասամբ Ակեղեցւոյ շնութեածը պիտի բարձրանար Պետրոսի վրայ, և մենք, 19 դարերէն ըզկնի, կարող ենք Ոիմնը վէմ կամ ժայռ համարիլ, յորմէ կոփուեցան իւր քարոզութեանը հաւատացողները. Եայի. ծ.Ա. 1: Աթէ Յիսուս, տարբեր, բայց Ճշմարիտ անուն մի տալով Ոիմնին ասած լինէր՝ Դու ես հայ Ճշմարտութեան, և այս հայով ես պիտի անուշանէմ Ակեղեցին: և կամ թէ՝ Դու ջուր կենաւնի Վարդապետութեան, ես այս ջուր պիտի արդուցանէմ Ակեղեցին՝ բնաւ կարող չէնք հետեւցնել թէ՝ Պօղոս, Յովհաննէս, Յակովոս, Այօղոս, Տիմոթէոս, Թագէոս, Բարդուղիմէոս և այլք իրաւունք չունին մասնակցելու սոյն անուանակոչու-

թեանը.վասն զի մի է ամենուն ուսած ճշմարտութիւնը , վարդապետութիւնը և դաւանութիւնը : Այս ապաբէն ինքն իսկական հացն և կենդանի ջուրըն Յիսուս Քրիստոս փոխարկեց իւր առաքեալները ՚ի հաց և ՚ի ջուր կենդանի : Խնչպէս կը զսնար ուրեմն երկնաւոր վարդապետը միւս առաքելոց կոչումը , որոնք ամենեքեան քարինք էին և մասունք անկեան Վիմին Յիսուս սի , որուն վրայ շնեցաւ Ակեղեցին . Արդ , Եթէ Յիսուս Ոիմնի անունը փոխած չը լինէր միւս առաքելոց պէս և Պետրոս կոչած , դարձեալ Փրկչի խօսքը իւր նշանակութիւն պիտի ունենար Ախմոնի առաքելութեան նկատմամբ , վասն զի նա եւս միւս առաքելոց պէս աշխատեցաւ Աւետարանի լոյսը երկրիս վրայ տարածելու Այսկայն գուցէ հարցուի թէ ինչո՞ւ համար միայն Ախմոնի անունը փոխուեցաւ և Այս իրշուեցաւ : Այս պիտի հարցում մի երբէք կարող չէ առաքելական պաշտօնի մէջ առանձին արտօնութիւն տալ Պետրոսին . Որչափ կամին թող մեկնեն , ինչպէս կամին թող մեկնեն , առաքելութեան մէջ բացառութիւն չըկայ : Առաքելութե կոչումը հաւասարութեան վրայ հիմնած է , Հոգւոյն Արքոց շնորհքը հաւասարապէս սփռուած է ամենուն վրայ և Աւետարանի իւրաքանչիւր խօսքերէն հաւասարութեան անուշահոտութիւնը միայն կը ծաւալի : Ինտելացէք միանդամ Աւետարանի ոգւոյն , ջնջեցէք այն կանխակալ մտածութիւնները , որովք ջանացին ումանք մասնաւոր առանձնաշնորհութիւններ մնատուել Պետրոսի վրայ , փարատեցէք մի անգամ ամեն մթութիւն և մըռայլ . զըր կուտակեցին Պետրոսի վրայ թիւր մեկնութեան ամսերը , և խեկոյն կը տեսնէք , որ Յիսուս սի խօս-

քերը պայծառ են իբրեւ լոյս , և կը լուսաւորին ամեն միոք որ լուսոց կը փափաքի :

Կմեն գործոց մէջ , Եթէ սկզբունքին նայինք , կը տեսնենք որ Աստուած միայն ինքն կը գործէ և իւր փառքը ուրիշն չըտար : Բայց Եթէ սկզբունքի բարձրածութենէն դէպ ՚ի վար նայինք , կը տեսնենք որ , արդարեւ Աստուած կը գործէ , բայց ունի նմանապէս և գործակիցներ : Վարդիկ գործակից են Աստուածոց , վասն զի ինքն այսպէս կամեցաւ : Տարակոյս չը կայ որ մարդկանց գործը Աստուածոց կը պատկանի ինչպէս և մարդիկ ինքեանք , որոնք Աստուածմէ ստեղծուած և զօրութիւն ստացած են գործելու համար : Բայց շատ անդամ Աստուածոց գործը մարդկանց ձեռքով կը գործուի , թէ և տարբեր եղանակաւ և տարբեր աստիճանաւ : Օրինակի համար դիւցանական թատրերգութիւն մի կը ներկայանայ մեզ և կը տեսնենք որ գերերը տարբեր են , թէ և ամենքն եւս իրենց տեղը և արժէքը ունին : Կմեն տեղ , ամեն ժամանակ և ամեն գործողութեան մէջ մարդիկ կան , որոնք այլոց օրինակ տալու համար առաջ իրենք կըսկսին , իրենք կը ձեռնորկեն եւ իրենք ճանապարհը կը հարթեն : Կմեն ընկերութիւն և ամեն հասարակութիւն , ամենէն ազատն անդամ , երբ նշանաւոր գործ մի կատարել կը փափաքի , երբ երեւելի յեղաջրօւմ մի առնել կը ձգտի , միշտ այնպիսի անհատներ կ'որոնէ , որոնք աւելի ընդունակ են գործոց յառաջադիմութեան համար : Այսպէս ևս , Աստուած , իւր երկնաւոր թագաւորութիւնը հաստատելու համար , կը յարուցանէ նոյնպիսի անհատներ : Քանի որ մարդկային բնութիւնը այսպէս է , թէ ընկերական և թէ կը ո-

նական ասպարիզին մէջ, միշտ մարդիկ պիսի գտնուին, որոց միայն յաւ տուկ է սկիզբն առնել որ և իցէ մեծ գործողութեան, որոց միայն տրուած է առաջին անգամ դրօշ պարզել և հասարակաց շարժմանը կարապետ լինիլ, Աշխարհիս ամեն մեծամեծ իրողութեանց մէջ, որոնք փոփոխած և յեղաշրջած են երկրիս երեսը և մարդկանց մոքերը, հասարակաց բազմութիւնը միշտ առաջնորդ մի ունեցած է: Հասարակութիւնը միշտ առաջնորդ կը վնասէ, ոչ թէ գաղտփար ներ ստանալու համար, այլ իւր ունեցածները իրագործելու համար, վասըն զի եթէ գաղափարներ չունենար, առաջնորդ եւս չէր փնտռեր: Ըստ անգամ եւս, տակաւին հասարակութիւնը ջրինուած, ամենէն եռանդուար, ամենէն զօրաւորը, բայց ոչ թէ միշտ ամենէն ընտիրն և լուսաւորեալն, ինքնին յառաջ կը խաղայ, ինքնին ձեռն կը խմէ, և երբեմն ինքն միայնակ է բոլորովն և միայն իւր համար կ'աջնատի, բայց կը տեսնես որ իւր պարզած դրօշին ներբեւ բազմաթիւ բանակ կը համախմբի: Յօթէ բանանք մարդկային ազգի պատմութիւնը՝ հարիւրաւոր օրինակներ կը ներկայանան մեր աչքին կըզգա՞ր արդեօք | ութեր ժողովուրդի ապագայ յայզը, ջոդիսենք, բայց երբ անվեհեր նշան տուաւ և դրօշ պարզեց Պապական իշխանութեան դէմ, բիւրաւոր մարդիկ սոսկալի պատերազմի դաշտը նետուեցան և հետեւեցան | ութերին: Ո՞վ կը կարծէր իսկզբան թէ աննշան կրօնաւոր մի պիտի կարենար վեր ՚ի վայր ցնցել դարերով բարձրացած Պապական իշխանութեան շէնքը և անկանգնելի կերպով հարուածել: Բայց ինչո՞ւ | ութերի վրայ խօսինք, մինչդեռ աւելի մերձաւոր և գեղեցիկ օրինակներ:

ունինք մեր առջեւ: Աէդ Տրդատայ ահուելի բանակին և լէպէօնին մէջ սրասուպարու ած ստակական զինուոր մի, Ո. Դրիգոր, կոտապաշտութեան արհաւ բանաց դէմ խաչ դրօշը կը պարզէ, դասն տանջանաց կը մատնուի, եւ սակաւ ժամանակէն զինի, կը տեսնես որ Եփրամայ տփանց վրայ հաւատավ զինուորեալ լաւատեսիլ բանակներ կենարար խաչ դրօշին տոկ կը տագուարին, միլրատելով ՚ի ջաւը սրբութեան, ՚ի հաւր զօրութեան ՚ի Հոգին Առերբ: Այսպէս ես, չը ժըստ տենք որ, քրիստոնէական առաջնորդին Եկեղեցւոյն մէջ Պետրոսի մանձը յաճախ կը ներկայանայ մեզ, ինքն կը հնչեցնէ քրիստոնէական քարոզութեան առաջնորդն բարբառը, բայց երբէք իշխանական իրաւունքը չը վերադրէր իւր անձին: վասն զի եթէ Հըրէաստանի մէջ ինքն առաջնորդ կը իսուի, Հեթանոսութեան մէջ Պօղոսն ու Ապօղան, Թագէոսն ու Բարդուղիմէոսն են, որք առաջնորդ կը հընչեցնեն աւետարանական բարբառն, Բայց եթէ լաւ խօրհինք, կը տեսնենք որ Աւետարանի քարոզութեան սկըզբնաւորութիւնը և ոչ մէկուն կը վերաբերի: Ո տոն զի աւետարանական քայլուալուր բարբառոյ առաջնորդն հընչեւը Շեթզէ հեմի մասւրին մէջ կը լսուի և Պաղդուայի բարձր դիտանոցին վրացէն իւր լսումն կ'առնու: Քրիստոնէութեան սկզբնաքարոզին նոյն ինքն Քրիստոսն է, խոկ առաքեալք նորա հետեւողըն են և քրիստոսեան աւագալուր ձայնի կրկնողքն: Աւրեմին ուր մնաց այս մասին Պետրոսի կարծեցեալ իրաւասութիւնը:

Սրդէն քրիստոնէական նորածին Եկեղեցւոյն մէջ, որ Քրիստոսի շուը զր կը ժողովուէր, մինք բնաւ շնչեն նշանարեր, որ Քրիստոս առաջնորդն աեղը

Պետրոսին տուած լինի, վասն զի առաջին տեղը և ոչ մէկուն կը պատկանի, Վ'նչափես պքանչեց են Փրկչի այս խօսքերը, զոր արտասանեց Օքբեթ թեայի որդւոց մօր հարցման առթիւ. “Որ կամիցի կ'ձենջ առաջնին լինի՞ւ եղիցի ձեր ծառոյ, ” Ա. 27. Փրկչի բերանէն բնաւ այնպիսի խօսք մի ելած չէ, որով կարենանք հետեւ ցընել թէ նա Պետրոսին գերիշխաւ նութիւն տուած է միւս առաքելց վլայ. Վ'նչք եւս կարող չնիք, արտաքց Վ'ւետաշանի, Պետրոսեան գերիշխանութիւններապել, Վ'նչ կըտեսնենք. Աոր Կտակարանի մէջ Պետրոսին նկատմամբ, թուենիք մի առ մի, որպէս զի ընկարծուի երբեք՝ թէ մ.նիք կանխակալ նախապաշարում ունինք և կողմնակի կը վարուինք մեր դիսողութեան մէջ: Յուուենիք մի առ մի, որպէս զի բնաւ երկայսութեան աեղի ընթողունք մեր ասացուածոց մէջ:

Չենք ուրանար, որ Յիսուս յաճախ իւր խօսքը Պետրոսին կ'ուզզէ և Պետրոս յաճախ կը խօսի իւր ընկերակցաց կողմէն: Չենք ուրանար, որ Յիսուս գողցես մասնաւոր մտադրութիւն կը դարձն: Պետրոսի վայ, կը պատրաստէ, կը կրթէ, կը փորձէ: Պետրոս գողցես գործի մ'է, զոր Յիսուս կը յարդարէ. մետաղ մ'է, զոր կը զոէ. սուր մ'է, զոր կը սրէ: Պետրոսի կրթութեամբ կը կրթին եւ միւնները. Չենք ուրանար, որ Վ'ւետարանի ներկայացուցած առաքելական անուանց շարքին մէջ Պետրոսի անունը յաճախ առաջն տեղը կը դրաւէ: Չենք ուրանար նմանապէս, որ Պետրոս ինքն կ'առաջարկէ երկոտասաներորդ առաքեալը ընտրել ՚ի տեղի Յիսուսային, “Որ անկաւ և գընաց ՚ի տեղի իւր. ” Ա. 25. Իսկ Հոգւցն Որբայ գալատենէն զինի, երբ

իզուաց շնորհը ափոեցաւ, երբ արէից բազմութիւնը խսնեցաւ, որոնք թիւնաւորուած չէն քահանաներէն, երբ երկրի շարժման հետ մարդկանց սրաերն եւս շարժեցան, գարձեալ Պետրոսն է, որ կը հրաւերէ նորընծաները ՚ի մկրտութիւն և երեք հազար երկրպագուներ կ'ըսկսին երկիրպագանել Վ'ստուծոյ հոգւով եւ ձշմարտութեամբ այն քաղաքին մէջ, ուր սպանաւ Քրիստոս, Քանի մի օր կ'անցնի, Պետրոս այն հոււտով ոգեւորուած, որոց մի հատիկն ընոներ կը անշափակինէ, առաջի բազմութեան հրաշալի բժշկութիւն մի կը կատարէ: Պետրոս, իւր նոր քարոզութեան համար, շղթայի կը մատնուի, բայց հինգ հազար անձինք կը կոչէ ՚ի խոստովանութիւն նոր հաւատոյ: Պետրոս կը կալանաւորի և երբեք իւր ազգեցութիւնը ընուազիր: Պետրոսի ազատութիւնը զինքը յառաջ կը մղէ գէպ ՚ի ամբովոը, իսկ նորա կալանաւորութիւնը կամ գերութիւնը առ ինքն կը բերէ հրեական քահանան յութեան անդամները, Պետրոս կը յայսնէ քահանաներուն, ինչպէս և ամբովին, մարդկանց երկնաւոր Հօրդութեան խորհուրդը: Եւ առաջն անգամ, Պետրոսի կալանաւորութեան ընկերակիցն Յովհաննէս կը խոցէ իւր լուսութիւնը, կը գործակցի Պետրոսին, կը հոչաշկէ, կ'աւետարանէ երկնաւոր այցելութիւնը, խաղաղութեամբ ու պարզութեամբ սարսափ կը տարածէ քահանայից սրտերուն մէջ և կը գատապարտէ նոցան անդործութիւնը: “Եթէ արժան իցէ առաջի Վ'ստուծոյ՝ ձեղ լսել առաւել քան Վ'ստուծոյ, ընտրեցէք. ” Գործ. Դ. 49. Պետրոս ազատուելով՝ գարձեալ իւր տեղը կը դրաւէ առաքելոց մէջ և կըսկսի գործել: Աոր

Կոտակարանի մէջ երկու սոսկալի հրաշեց առաջնին Պետրոսին կը պատկանին ։ Երածայնին Ենանիա և Ապօփիրոյ յանկարծաման կը լինին իրենց կեզծքարեպաշտութեան եւ ստախօսութեան համար ։ Ուսուցանելն եւ վարդապետելն ամեն առաքելց կը պատկանի, որովհետեւ ամենքն եւս ընկալան Հոգին Սուրբ ։ Տայց ձեռնար կութեան կամ սկզբնաւորութե մէջ մասնաւոր յատկութիւն մի կ'երեւի Պետրոսի մէջ, մինչեւ որ կեդրոնները կը բազմանան, նոր Լիկեղեցին քանի մի նորերը կը ծնանի, և իւրաքանչիւրն, առաջնոյն պէս, իւր յառաջամարտիկն կ'ունենայ ։ Փիլիպոս կ'ուսուցանէ և կը սերմանէ Եւետարանի նոր սերմունքը Սամարիայի մէջ, Պետրոս, առանց սերմանելու, կը վազէ և կը հնձէ ։ Ես խուրձ կը կապէ, կը կարդաւորէ և Փիլիպոսին հետ կը խնդակցի ։ Պետրոս այցելութեամբ կը շըմի ամեն Լիկեղեցիներ ։ Գործ թ. 52: Ի՞ա՞լ է արդեօք այսքանը ։ Ոչ, Պետրոս աշխատանք մի եւս ունի, զոր պիտի յիշեցնք ։ Պետրոս հանդիսապէս հեթանոսներ ևս Լիկեղեցւոյ ծոցը կը մուծանէ ։ Ըստանօր եւս, առաւել գործ կ'երեւի, քան թէ ուսուցանել Պետրոս ոչ հնարեց, ոչ գտաւ, ոչ յշացաւ և ոչ մտաբերեց, որ Ծառուծոյ շնորհքը ընդհանրական է ։ Ես մի այն տեսիլ մի կը տեսնէ, որուն խորը իսկզբան անթափանցելի է իրեն համար ։

Այս տեսլեամբ կ'ուսանի, կը պատրաստուի Պետրոս յառաջնելու դէպ ՚ի մի անակնկալ և նոր ճշմարտութիւն, կամ, աւելի պարզ ասել, դէպ ՚ի զարդացումն, դէպ ՚ի հանրական ծաւալումն աւետարանական մեծ ճըշմարտութեան ։ Պետրոս ոչ թէ կ'ուսուցանէ, այլ ինքն է որ կ'ուսանի,

երբ Ծառուծոյ հրամանաւ կուռնէլիս հարիւրապետի տունը կ'առաջնորդուի, և այն տեղ իւր տեսլեան մեկնութիւնը կը գտնէ ։ և երբ կը տեսնէ, որ Հոգին Սուրբ սիրած է իւր պարզեւները և դրօշմած է իւր կնքով այն մարդիկը, որոնք ոչ Հոգայ են և ոչ սերունդ Հոգեցի, զարմացմամբ կը հրատարակէ Հեթանոսաց կոչման նոր և հրաշալի աւետիքը և կ'աղաղակէ մարդարէին հետ ։ Ա Աւրախ լեր, ամսուլ, որ ոչ ծնանէիր, գուշեամ և աղաղակեամ որ ոչդ երկնէիր . . . ընդարձակեամ զտեղի խորանի քո և զրահից քոց ։ կանգնեամ և մի անխայեր . . . ո Եսայի ։ Ճ. 1—5: Ուր կը մնան Պետրոսի հրէականնախկին նախապաշտրմունքները սոյն օրինակ յայսնութեան առջեւ ։ Ովկ կարող է ընդդիմանալ և արդելուլ մը կը րատելու այն մարդիկը, որոնք ընդունած են Հոգին Սուրբ : Ալ տարակուսի արդեօք Պետրոս, կը տատամանի, կ'երկմոնի : Ոչ երբէք : Ես կը տապալէ այն պատուարը, այն ցանկը, զոր սակաւ ինչ առաջ անկործանելի կը կարծէր ։ Ես իսկցին կը դադարի հրէաւթենէ, ինչպէս և նորահաւատները կը դադարին հեթանոսութենէ, Պետրոս կը հեղու մլըր տութեան ջուրը հեթանոս գլուխներուն վրայ, և կուռնէլիսոսի յարկին տակ կը կատարուի Ծառուծոյ ամենամեծ խոստումը և կը բացուի քրիստոնէութեան անհուն ապագան:

Վհա առանց զանալու թուեցինք մի առ մի Պետրոսի գործքերը, որ պէս զի չասեն մեզ թէ միայն Եր կտակարանի մի երեսը կը կարդանք, Խսկ այսուհետեւ միայն Պետրոսի անունը և հետքը պիտի տեսնենք : Ուրոնեցէք, հետազոտեցէք, շերեւիր Պետրոս : Դոգցես կը ծածկուի Պետ-

բոսի անձը և կը լուէ նորա անունը .  
Պետրոսի գործը տակաւին առ արտը-  
ւած չէ : Ա, ա պիտի աշխատի մինչեւ  
իւրնահատակութեան վերջին և բեղ-  
մաւոր հանդէսը : Ի՞այց քարոզու-  
թեան առաջին մղումէն զինի՝ Պետ-  
րոսի դերը նոյն չէ : Ա, իրօք և լու-  
թեամբ կը հրաժարի այն առաջնու-  
թենէն, զոր առ ժամանակ մի կը վա-  
րէր : Հին Հռովմաց դիբատարունե-  
րուն նման նա կը դառնայ դէպ ՚ի ա-  
րօրը : Եւ այսուհետեւ, եթէ վա-  
փագինք առաւելութիւն մի կամ ա-  
ւագութիւն մի փնտուել Պետրոսին  
վրայ, ուրիշ բան չենք գտներ, բայց  
միայն հեղութիւն և խոնարհութիւն,  
Ովկարող է կարդալ և կամ ովկ կար  
դացած է երբէք Պետրոսի թղթերը,  
առանց նշմարելու նորա հեղահամ-  
բոր և խոնարհ հոգին, Ի՞այցէք նորա  
թղթերը և կարդացէք : Ուր է այն  
անհամբեր և խրսխտ Ախմոնը, որ կը  
հարկանէ քահանայապետի ծառան,  
Մատ. Էջ. 51 : Ուր է այն յանձնա-  
պաստան Ախմոնը, որ կը համարձակի  
ասել իւր փարտապետին . “թէպէտ  
և ամենեքեան գայթակղեսցին ՚ի քէն,  
սակայն ես ոչ գայթակղեցաց .” Մատ.  
Էջ. 55 : Ուր է այն յանդուգն Ախ-  
մոնը, որ Յիսուսի տնօրէնութեան  
կատարմանը դիմադրելով և նորա հետ  
կագելով կազաղակէր . “ Քան լիցի  
քեզ տէր, մի եղիցի քեզ այդ : ” Ախ-  
մոն ոչ եւս է, և ոչ երեւի տեղի նո-  
րա : Ի՞այց ուր է նմանապէս այն Ախ-  
մոնը որ կ'ուրանար իւր Տէրը և Վար-  
դապետը . Չը կայ այս Ախմոնը իւր  
թղթերուն մէջ, անհետացած և ը-  
քացած է նա, ոչ միայն Փրկչի առ-  
ջեւ, այլ և նոցա առջեւ, զօրս ՚ի  
պատերազմ կ'առաջնորդէր խաւարի  
դէմ : Ախմոնը փախուած է ՚ի զգօն,  
քաղցր, մարդառէր և հեղահամբոր

ծառայ Կատուծոյ և մարդկան : Ախմոն  
դարձած է հրաշալի տիպար խօնար-  
հութեան և ամբծութեան :

Արդ այս ամենը յառաջ բերելէն  
զինի՝ շարունակենք այժմ ամեն կող-  
մէն պարզել խնդիրը և ակներեւ ցոյց  
տալ աւետարանական ճշմարտութեց  
այն փրկարար արդիւնքը, զոր մար-  
դիկ կարող են բաղել ու զիղ մեկնե-  
լով և հասկնալով Կատուծոյ խօսքը :

(Ըստ Անդրեակիլէ :

## ՍՈՒՐԲ ՑԵՂԵԱՑ ԽՆԴԻՐԸ

(Կարունակութիւն, առև թիւ 2+)

“ Այն չնորհքը կորսնցուցած չեմ  
համարեր, լսաւ Պ. Հիւպատոսը,  
քանի որ դուք առատասիրտ էք և նե-  
րողամիտ Հայր . դարձեալ պիտի շը-  
նորհէք նոյն արտօնութիւնն, որց  
վասն դեռ ես իմ յոյս կտրած չեմ.  
և կը թախանձեմ և պիտի թախան-  
ձեմ որ ընդունիք սոյն խնդիրս, և  
թոյլատրէք Լատինաց գալ իւրեանց  
պատարազը ընել դարձեալ, և ես  
ինչպէս փոքր մի յառաջ ալ ասացի,  
պէտք եղածները պիտի ըսեմ և պի-  
տի պատուիրեմ, որ այսուհետեւ եր-  
բէք ձեր իրաւունքին չդպջին, և նա  
շանոր սովորութիւններ չհաստատեն  
և զձեզ չլինացնեն : ”

Եւ աւելցուց Պ. Հիւպատոսն ը-  
սելով թէ, “ Ի՞նչ պատուական եկեղե-  
ցի ունիք եղեր, ասոր նմանը չունաց  
Լիրուաղէմի մէջ, իրաւ որ կ'արժէ :  
Ուրեմն Արքազան Հայր, երջանիկ էք  
դուք և ձեր ազգը, որ Ասուրը Լիրու-  
աղէմի մէջ, պատուական Պատրիար-  
քարան մի ունենալէ յետոյ այսպէս

Հյակապ և փոռաւոր եկեղեցի ալ  
ունիք :

“Եւ այն ՚ի վերայ լերինն Ոիօնին  
ըստ Արքազան Պատրիարքն ։ —

“Մեծ երջանկութիւնն է այս ձեզ  
համար, կրկնեց Պ. Հիւպատոսը,  
Սուրբ Երուսաղեմի մէջ, եւ այն  
ալ Ոիօն լերան վրայ այսպէս ընդար-  
ձակ և հյակապ վանք ունենալը, սա-  
կայն պարտաւոր էր նաեւ սցըց խըն-  
դրանոց եւս զիջանել, որ անոնք ալ  
մասնակցելով միոիթարուին . —

“Ուրիշ ազգեր զանազան բարե-  
մասնութիւններով երջանկացեալ են,  
ըստ Արքազան Պատրիարքը դար-  
ձեալ իրենց ձեռքը գտնուած տեղե-  
րով և վայելած բարիքներով. մի թէ  
քիչ տեղ ունին լատինք և Յօնք ի-  
րենց ձեռքը. թող այն անհամար ե-  
կամուտները, որ գետօրէն կը վազեն  
կուգան Եւրոպայի բոլոր թագաւոռ-  
րայ և համայն ժողովրդոց կողմանէ,  
և իրենք երբեմն զմեզ նախատելով  
կը յօնորտան ըսելով թէ, Այնք Եւ-  
րոպից Եօթը տէրութեանց կողմէն  
կը նստինք հոս, ո և երբեմն ալ դաս  
վարելու ատեն անոնց ազգեցութիւ-  
նը մէջ բերելով կը ունի եօթն տէրու-  
թեանց սեպհականութիւնն է, և այլն.  
այսքան բարիքներ ունեցող, և զայն  
կշտապինդ վայելող միաբանութիւնն  
մը, խեղճ Հայոց միաբանութեանը.  
որք տարոց տարի Եկան ու խոտաւորոց  
փաքք գումարովն աղ քատօրէն ասլրե-  
լով Շնորհիւ բարիխնամ (Օսմաննեան  
Տէրութեան օրինաւոր հրովարտակ-  
ներով) սեփհականուած այս մի-  
ակ միոիթարութեան մէջ անդամ  
մասնակցիլ երազելովնին՝ որ աստի-  
ճան մեղանցում կը սեպուի Պ. Հիւ-  
պատոս, մտածեցէք կ'աղաւեմ. Եթէ  
մէնք այս մեր փաքք վայելքէն անոնց  
մասն հանել պարտաւոր ենք ըստ խ-

թեանց կարծեաց, արդեօք իրենք իրենց  
անհամար բարա թէց զար կը վայելին  
կշտապինդ, որքան պարտաւոր են մեզ  
եւս մասն եւ բամբին հանելու, ըստ  
ակրունական անսուած բանին թէ  
«Որում շատ տուաւ՝ շատ խնդրեացի  
ինմանէ ո եւն, Այսողէս խօսքերով  
ողջանեալ զմիմեանս բամենուեցան ա-  
մենայն սիրով իօնք տալով Պ. Հիւ-  
պատոսն թէ, յատուկ ուրիշ օր մը  
պիտի գոյ.

Դարձեալ սուրբ Յակովի խնդրոյն վայոչ  
Յունաց կանուց Թէջ եղած խօսքութիւն  
(Խորագիա), ուր Ներիայ Եին Վ Ամէ. Վ Ամէ  
Փաշյան, Վ Ամէ. Այսուիժ Եփենովին Ե-  
Դամակոսի Պաղեսոյ Պ. Հիւպատոսը Ե-  
կողմանէ Լուսին իրօնաւորոց :

Օ կնի սովորական տեսութեան  
հարցուց Վ Ամէ. Ոիւնիֆ Էֆէնտին  
Պ. Պատրիարքին թէ, «Յերեկեան օր  
մէնք ուրիշ գործեր ունեցանք և փո-  
քը ինչ շրջադաշելու տեղեր ալ գնա-  
ցինք, ՚ի հարկէ գուք աւելի օգտա-  
կոր գործերու պարտապած պիտի ըւ-  
լոք : —

Ա Ռէնտիմ, ըստ Արքազան Պատ-  
րիսը, մեր գործերը արդէն ինքնին  
յայտնի են, որ նախ մեր Օգոստա-  
փառ Սու լմանին անդին կենաց եր-  
կորութէ, և նորա բոլոր ձեռնարկած  
բարի գործերուն յաջողութեան, և  
զինի բոլոր աշխարհի խաղաղութեան  
և թագաւորաց հաշառութեան համար  
ազօթել է միշտ, և ազա շնորհիւ մեր  
մեծազօր թագաւորին ձեռքերնիս  
գտնուած վանօրէից վրայ հսկել, և  
դարձեալ մեր բարեխնամ Տէրութէ  
անուան և համայն Վզգիս փառք և  
պատիւ բերող և հայրենեաց օգտա-  
կոր գործերուն աւելի հոգ տանել  
է, ինչպէս վարժաւան, տպարանի և

թանդարանի , և այլ այսպիսի օգտակար հար հաստատութեանց , բնչպէս որ անցեալները թէ Ասեմ . Ա ալ Փառ շայն և յետոյ Զեր Ա սեմութիւնը անձամի այցելութեան գալով ականատես իսկ եղաք , ոյք վասն մեծապէս շնորհակալութիւնս կը մատուցանեմ թէ իմ համօրէն աղքիս և թէ բոլոր միաբանութեանս կողմանէ Զեր Ա սեմութեան : Մհա ասոնք են մեր պաշտօնին պարտաւորութիւնը և պարապմունքները :

“ Բայց յերեկեան օր, կը կնեց Ո. Պատրիհարքը, մինչ մենք կը պատրաստուէինք մեր բարեկամ Պ. Հիւպատոսի բարի գալուստը շնորհաւորելու երթալու, ինքն կանխեց մեր վաճքը եկաւ և բաւական միջոց ալ տեսնուեցանք, և երկար խօսակցելու առարկաներ ունեցանք, եւ գուցէ Պ. Հիւպատոսը ձանձրացած ալ պիտի ըլլայ, ոյր վասն ներում կը իւղնդրեմ նորին յարգութենէն : —

“Քաւ լիցի, ոչ թէ միայն չձանձ  
բացայ, ըստաւ Պ. Հիւպատոսն, ոյլ և  
մեծապէս շնօրհակալ եւս եմ որ մեծ  
մարդափրութեամբ ընդունեցիք ըդ  
մեզ, և յանձն առիք մեր չդիտցած  
ները մեղի պատմելով տեղեկացնե-  
լու, և այն օրինաւոր փաստերով և  
վկայութեամբ։ Եթէ ժամանակս նե-  
րէ, միտք ունիմ դարձեալ գալու, և  
ձեր վանուց բոլոր հաստատութիւն-  
ներն պարտելու և աչքէ անցընելու  
զանոնք եթէ կը բարեհաճիք. և մա-  
նաւանդ կը լսեմ որ օրինաւոր վար-  
ժարան, տպարան և թանգարան ալ  
ունիք եղեր վանուցդ մէջ. Նաեւ  
գուք անձամբ քանի կեղարուեստ-  
ներ ալ գիտեր եղեր, որոնք ինձ ալ  
սիրելի են, և կ'ուղեմ անոնց փորձե-  
րը աեսնել”։

Այս կետերուն վըսց Ա սէմ. Ա աշ  
օ

լի փաշայն և Վ սեմ. Ո խւնիթ է ֆէն  
տին բաւական գոհունակութեամք  
սկսան խօսիլ Պ. Հիւպատոսին հետ,  
և իրենց այցելութեան օրը տեսած  
ները համարեա թէ մի ըստ միջէ  
պատմեցին , թէ նոյն հաստատու-  
թիւնները աչքէ անցընելնին , և թէ  
թանգարանի Այցելուաց համար յառ-  
կացեալ տումարին մէջ իրենց Վ սեմ.  
անուննին ստորագրելնին մէջ բերե-  
լով , են , են , են :

Ծուաւ Ա. Պատրիարքն . “ Ը ատ  
փոքր բաներ են , Պ. Հիւպատոս,  
մեր ունեցածները Ձեր տեսածնե-  
րուն և ունեցածներնուդ հետ բաղկ-  
դատելով . բայց դուք քանի որ կը  
բարեհաճիք գալ , հրամեցէք երբ որ  
կը կամիք , մեծ պատիւ կը համարեմ  
ինձ համար : Վ սեմ . Վ ալի Փաշայն  
և Ո խւնիք էքէնտին ըսին . “ Բ աթ-  
րիք է ֆէնտի , կ'երեւի որ Պ. Հիւ-  
պատոսին հետ պատարագելու խըն-  
դիրը կամ լուծած էք և կամ դիւրա-  
ցուցած , քանի որ ըստ ձեր խոստման  
բաւական երկար տեսութիւն ըրած  
ըլլալով , ի հարկէ գործը դիւրացու-  
ցած պիտի ըլլաք . եթէ այդպէս բան  
մը եղած է , շատ գոհ պիտի ըլլամբւ-

Այլէ թէ միայն չդիւրացաւ, ըստ  
Ո. Պատրիարքն, այլ և աւելի անկա-  
րելիութեան կերպարանք առաւ իմ  
յառաջքերած հաստատ փաստերովս,  
զըս Պ. Հիւպատոսին մի ըստ միոնէ  
պատմեցի ամենայն պարագայիւք և  
վկայութեամբ . 'ի հարկէ այսքան իմ  
բռնաբարեալ իրաւունքներս տեսնա-  
լէ զկնի, վերստին զիս չպիտի կրնայ  
ստիպել, և կամ աղաչէլ նոյն շորհքը  
դարձեալ շարունակելու : —

“Ընորհքը միշտ շնորհքէ, ըստ Պ.  
Հիւպատոսը, զոր շնորհընկալը միշտ  
շնորհողէն կը թափանաձէ մինչեւ կա-  
րողանալ զայն կրկին ձեռք բերելու,

որ և իցէ կերպիւ : —

“ Հըրբ ապերախտութեամբ շարժի շնորհընկալը , պատասխանեց Ո . Պատրիարքը , և վայելած շնորհքը շարաջար գործածելով իբրեւ իրաւունքի տէր կարծելով զինքն՝ պաշտօնական կերպարանք տալ ճգնի , և միանգամայն նոյն շնորհքը ընողին իսկ սեփհականութեան արդար իրաւունքին դըլուշի , այն ատեն զիարդ կարելի կըլլայ , Պ . Հիւպատոս , նոյն շնորհքը դարձեալ շարունակելու թոյլատրել այն ՚ի կորուստ Ոիաբանութեան ազգային արդար սեփհականութեանս :

“ Լա մանաւանդ , արդէն յայանի կ'երեւի որ՝ զուտ կրօնական եղած ինդրոյն քաղաքականի կերպարանք տալ կ'երազեն , այս խնդիրը բոլըրովին կրօնական է , և իմ տէրութիւնս և բոլոր տէրութիւննք կրօնական դրլուխներուն յանձնած են իրենց կրրոնքը ազատօրէն պաշտելու . ինչպէս Ջրանշխկեանք իրենց կրօնական անսիօալ Պատին ունին , նմանապէս ամենայն ազգ . նոյնպէս և Հայոց ազգը ունի կրօնական կառավարութեան գլուխ իր Պապը , այսինքն սուրբ Աշմիանայ սրբազն Խաթողիկոսն ամենայն Հայոց , (բայց ոչ անսիօալ .) ոյր վասն ՚ի հարկէ իմ կրօնական Վլուխս ալ ինձմէն կրօնական հաշիւ կըպահանջէ . և աշունի իսկ ծանուցածէր ինձ՝ (մինչ Հռոմավայի Պատին անսիօարութիւնն հաստատելու համար տիեզերական ժողով կազմելու հրաւէր կը կարդար , և լուելուան բոլըր Հայ Հպիսկոպոսաց հրաւիրագրեր կը խրկէր առանց խորհրդակցելու անոնց Գլխուն հետ ։ Թէ ահա Հռոմայի Պապը կ'աշխատի զինքն անսիօալ հրատարակել ինքն սիսալական և մահականացու գոլով հակառակ հեղութիւն և խոնարհութիւն քարոզող Յիսուսի

Քրիստոսի աւետարանական վարդապետութեան . զգուշացէք ուրեմն ՚ի խմբոյ անտի անսիօարութեան , և ըդգուշացուցէք զորս ընդ ձեզ են , և այլն և այլն և այլն :

“ Ձմող իմ կրօնական գլուխս սրբաղան Կաթողիկոս գրած և պատուիրած շըլլայ , և ոչ ալ զգուշացուցած , ես պարտաւոր չեմ միթէ իմ պարտքս ճանաչել , որ արդէն իսկ իմ պաշտօնս ալ է և պարտաւորութիւնըս , զգուշանալ յամենայն հակառակ վարդապետութիւնէ , որք ոչ համաձայնին հոգւցն՝ որբոյ Վւետարանին , և այս իսկ իմ ուխտս ալ է առաջի անսիօալ և անմահին Վատուծոյ և առաջի ամենայն աղգիս Հայոց , ուրեմն զիարդ կարեմ և իմ սուրբ ուխտիս հակառակ , իմ կրօնքս նախտով , այսպանող , և իմ սուրբ Հկեղեցւոյս մէջ անգամ իմ սուրբ զեկեղեցիս և ապգս հերձուած և հերետիկոս քարոզող կրօնաւորներուն դարձեալ թոյլատրել , որ իմ մեծազօր Տէրութեանս շնորհիւ ինձ ՚ի բնէ անտի սեպհական իրաւունքս եղած սուրբ Եկեղեցւոյս մէջ այդպէս ոճիր գործուին աչացս առջեւ եւ ականչէս ՚ի վար . միթէ արդարութիւն չինաց աշխարհիս վրայ , և միթէ տէր և տիրական ջըմնաց Հայոց Վզգին , քան լիցի , գեռ իմ մեծազօր Տէրութիւնս կարող և հաստատուն կանգնեալ կայ ամենայն կարողութեամբ և կարգադրութեամբ , գիտէ և կարող իսկ զրկելոյն իրաւունքը զրկողին ժանիքներէն թափել , և իւր իսկ սեպհական տիրավը յանձնելով ասել թէ Երթ , ազատ պաշտէ քու կրօնքդ , ոչ ոք կրնայ զբեղ արգիլէլ կամ անարդէլ . Եւ գուք Վսեմ . Տէպքը իմ , եթէ չէք կրնար իմ դասս որոշել և զիս այսպէս անիրաւ բռնաբարողեւ

րուն ձեռքէն ազատել, կ'աղացեմ աւսացէք ինձ, և ես անձամբ կ'երթամ կը ներկայանամ իմ ողորմած և արդարագատ վեհափառ թագաւորիս, և կը ինդրեմ՝ Արքին Վեհափառութենէն գոնէ . եա տէրախմէ տէրման, եա գաթլիմէ ֆէրման :

“Վիթէ իմ վեհափառ թագաւորս կուզէ իւր հաւատարիմ հպատակաց իրաւունքին կորսուելը կամ բռնաբարուիլը, մանաւանդ այսպիսի լուսաւորեալ գարուս մէջ, քաւ լիցի . —

“Դամթրիք տօսթումուզ, ասաց Վը սեմ. Վ ալի Փաշայն իւր բնական ազնիւ և համեղ բնաւորութեամբն, մի վշտանար և սիրոդ հանդարու պահէ, երբէք քու իրաւունքդ չկորսուիր . և ոչ մէկը կրնայ քու իրաւունքդ քու ձեռքէդ յափշտակել. “ Ոյցէի շահանէտէ . ո բայց քանի որ դատ կը վարուի, ՚ի հարկէ երկու կողմէն ալ պէտք եղածը պիտի խօսիք, և մենք ալ պարտաւորուած եմք լսել. նայեցէք մէկ անգամ, այս գործերուն համար տէրութեան կողմէն յատկապէս խրկուած է Վ սեմ. Վիւնիք է. ֆէնտին . նմանապէս և ես հրամանաւ նորին Վեհափառութեան եկած եմ աստ, այնքան գործերս ձգելով ՚ի Դամասկոս, ՚ի հարկէ այս հրամանները մեղ ընող բարեխնամ Տէրութիւնը ոչ ձեր և ոչ ուրիշ որ և իցէ հպատակաց իրաւունքին կորսուիլը չուզեր . ուրեմն մի վշտանար . կրօնքդ ազատ է, և Տէրութիւնը քու կրօնքիդ և կրօնական կարգերուդ և կանոններուդ երբէք չը խառնուիր, ազատ թողած է . ուրեմն առանց վշտանալու իրաւունքդ յառաջ բերելով խօսէ, մենք և Պ. Հիւպատոսը սիրով կը լսենք. և ոչ Պ. Հիւպատոսը կ'ուզէ ձեր սեպհական իրաւունքին բռնաբարուիլ . միայն մեր և

Պ. Հիւպատոսին ինդիրը այս է որ քանի որ դուք այսքան ատեննոյն շընորհքը ըրած էք, և Լատինք վայելած են զայն, եւ մօտ ատեններս ձեր սիրով որ և իցէ կերպիւ վատացուցեր են, նոյն վիշտերուն համեմիչ դեղեր դնելով բժշկելէ մեր աշխատութիւնը, և այն ձեր յօժար կամօքը և ամենայն սիրով նոյն շնորհքը դարձեալ Լատինաց թոյլատրենիդ կուզէնք, որք վայելել սկսին . բայց այսու ամենայնիւ ինչպէս քանիցս անգամ խօսուած է, դարձեալ կը խոստանամք մենք և Պ. Հիւպատոսը՝ որ սաստիկ պատուէր կը տրուի Լատինաց, որ երբէք նորանոր շարժումներ և սովորութիւններ չընեն . ոչ թէ միայն այս մասին, այլ ձեր բոլոր իւրաւանց վրայ երբէք ակնարկութիւն անգամ ընեն. և եթէ դարձեալ այնպէս շարժումներ ընել սկսին, դուք իրաւունք ունենաք խկոյն հերքել և ոչ երբէք ընդունել. մանաւանդ որ այսքան կ'աշխատուի, մեր աշխատութիւնն ալ ՚ի գերեւ չելայ . —

“Դախ իմ վեհափառ թագաւորէս շնորհակալ եմ, և ինձմով բոլոր Հայոց ազգս, ըսաւ Որբազան Պատրիարքըն, որ իւր հպատակ ծառայներուն իրաւանց կորսուիլը և անոնց բռնաբարուիլը երբէք չուզելով հրամայեց թէ Զեր Վ սեմութեանը և թէ Վ ըսեմ. Վիւնիք է ֆէնտիին հոս խրկուիլը, ոյր վասն Զեր Վ սեմութեանէն եւս շնորհակալ եմ:

“ՄՐԴ՝ քանի որ իմ վեհափառ թագաւորս իմ կրօնքս աղատ թողած է, և իմ վանորայքս ինձ յանձնած է իւր բարձր հրամատակովը՝ գիտութեամբ համայն Վագիս Հայոց, իմ կրօնքիս վրայ երբէք նախատինք չեմ կրնար ընդունիլ. և իմ սեպհական վանօրէից մէջ, յորս ես անսխալ և անմահ Վա

տուծոյ երկիրապագանեմ և զնա միայն  
կը պաշտեմ, չեմ թողուր և ոչ զոք  
պաշտօն կատարել, որ իմ կրօնքս կ'այ.  
պանէ, կը նախատէ, հրապարակա-  
կան անէծք կը կարդայ, հերձուա-  
ծող և հերետիկոս անուանելով զայն,  
Առվարականին գալով կ'ըսեմ, ես իրա-  
ւունքի և մալի տէր եմ, կ'ուզեմ  
կ'ընդունիմ կ'ուզեմ չեմ ընդունիր:  
Ընորհք մի է . այսքան ատեն է ըրած  
եմ. այսօր չեմ ըներ : Ոլորմութիւն  
մի է, այսօր կուտամ. վաղը չեմ տար :  
Չեր Վ սեմութեան Պ. Հիւպատոսին  
ուղած շնորհքը մանաւանդ թէ իմ  
անձնական սեպհականութիւնս չէ .  
այլ շնորհիւ մեծազօր տէրութեանս  
համայն Հայոց Ազգին սեպհակա-  
նութիւնն է, նուաստո Տէրութեան  
շնորհած հրովարտակին համաձայն  
պահպանող երեսփոխան մի եմ, ուս-  
տի չեմ կրնար երբէք այնպէս յայտ.  
Նի թշնամին դարձեալ իմ տունս հը-  
րաւիրել 'ի ցաւ, 'ի տրամութիւն և  
'ի գայթակլութիւն համայն Ազգիս  
և 'ի նախատինս իմ կրօնքիս :

“Ա. Դուք Վ սեմափայլ Տեարք,  
հանդերձ Պ. Հիւպատոսով կը խընդ-  
րէք և կը յորդորէք զիս որ՝ զիջանիմ  
ձեր հրամանին և թոյլատրեմինդրէմ  
իմ անձնական ծառայութենէս հրա-  
մայեցէք պատրաստ եմ կարելի եղա-  
ծը ընել, թէ և իմ անձիս անդամ  
բացարձակ տէրը ես չեմ, այլ իմ  
համայն ազգս է, վասն զի անոր նը-  
ւիրած եմ եկեղեցական եղած օրէս  
'ի վեր . ուրեմն այսքան պարտաւորու-  
թեանց դէմ, ես Բնչակէս կրնար մե-  
զանչել, մանաւանդ թէ նոյն մեզան-  
չեն անդամ իմ ձեռքս չէ :

“Ա. Մեաց սյժմ զմեզ վատահացու-  
ցած կէտին պատասխանել, որ կը  
ուշ թէ՝ “մենք լ ատինաց սաստիկ  
սիատուէր կուտամք որ՝ նորանոր սո-

վորութիւններ չը հնարեն և ձեր ի-  
րաւանց վրայ ակնարդկ անդամ չը ձը-  
գեն, ևն ևն ևն :

“Ա. Ծնդդունիմ Չեր Վ սեմութեան  
անդին խօսքերը նաեւ Պ. Հիւպատո-  
սին, Ճշմարիտ կ'ըսէք և այն յօդուտ  
մեզ, զնոյնն յանձն կ'առնուն նաեւ  
Ջրանշխակեան կրօնաւորք, և ամենայն  
վատահութեամբ խօսք ալ կուտան եր-  
բէք չմեղանչել, վասն զի նոցա բնա-  
ւորութիւնն է վերջին աստիճան զի-  
ջանիլ, աղասէլ, պաղատել, խոնար-  
հել, ծունր կրկնել ամենայնիւ, մին-  
չեւ իրենց ուղածը ձեռքբերեն . ան-  
կէ յետոց քիչ մը ատեն ալ ամենայն  
սիրով կ'երթան մինչեւ վատահացնեն.  
այլ երբ իրեն գործիքները կարգի կը  
դնեն և նպատակնին հասնելու կէտին  
կրբերեն, ալ անկէ զկնի նոցա բե-  
րանը ուրիշ խօսք չը գտնուիր այլ մի-  
այն նօ, նօ, նօ : Աօ, կ'ըսէն, բէյզամ  
պէտ չեն ըսեր . իմ ազգային իրաւուն-  
քըս կը կորաւի եղեր . կը վնասուի,  
կը բռնաբարուի եղեր, որո՞ւ հոգն է .  
իրենք արդէն անսիալ Պապայով մի-  
աբանութիւն մի են, և մնացեալ քը-  
րիստոնեայք, որոց մէջ եմք և մեք  
Հայքս, հերձուած, հերետիկոս և  
դժոխոց զաւակ տիտղոսավ պատիւած  
իրենցմէ միշտ . մեր խօսքը կ'ըլոյց այն  
առանք, վասն զի միտնգամայն բոլոր  
Լորուսազէ մի և ամենայն շրջակայից  
նորա իրենք են տէր ըստ իւրեանց  
կարծեաց, ուր կը միոյ խեղճ Հայոց  
ազգը իւր Պատրիարքովն հանդերձ :

“Վ սեմափայլ Տեարք իմ, նուաստո  
եթէ ուրիշ վանքի կամ քաղաքի միա-  
բանութենէ Պատրիարք ըլլայի ընտ-  
րուած, այս խօսակցութիւններէ, ա-  
ղաչանքներէ եւ ստիպումներէ 'ի  
հարկէ պիտի զիջանէի և համզուէի  
թոյլատրել լ ատինաց գալ պատարա-  
գել, այլ բարեբաղդաբար 'ի բնէ մի-

աբան եմ, և ահա սուրբ Յակովեայ վանուց այս 27 տարի է որ սոյն վանուց մէջ կը սպասաւ որեմ, և ամեն ժամանակ անոնց արարքները աչքիս դիմացն են, թէ անոնց և թէ ուրիշ ազգաց վրայ տեղեկութիւններ ուրիշ չեն հարցնելու կարօտութիւն չունիմ. ուրեմն այսքան լիովին տեղեկութիւն ունենալով և պատճառ արարքները ականատես իմ վկայութեամբս մի ըստ միոնչ դիմանալով, զիարդ կարելի է անոնց խոնարհութեան հնազանդութեն և խօսքերնուն խաբութիւն, որք սուտ է բոլորովին : Եւ միանգամայն իմ սեփականելու իրաւունքիս համար յայտնի թակարթ մի է : Կ'անցնի այս օրս, այս տարիս կամ միւսն եւս խաղաղութեամբ, և կը պատահի ապագայ ժամանակին սցնուիս երբ իմ իրաւունքներս բռնաբարել սկսին, այն ատեն նոր պիտի գանեմ Զեր Վ սեմութիւն և Պ. Հիւպատոսը որ՝ ըսեմ. ահա Լ ատինք Զեր Վ նծութեան տուած խօսքերնին հակաւակը սկսան գործել, դուք ձեզէն դատ արարէք ըստ ձեր հաւատարիմ խոստմանդ, և այլն :

“Քաւ լիցի Տեաքը իմ, որ իմ ձեռօքս այս ազէսքը թէ Ա. Աթուոյս և թէ ընդհանուր Հայոց Ազգիս գըլ խուն բերելու պատճառ ըլլամ, այդ ստորասութեան չեմ կրնար ձեռնամուխ ըլլալ, մանաւանդ թէ Զեր Վ սեմութեան պատուական անուան կը խնայիմ ապագային մէջ, զի ուրուն հետեւութիւնն շատ ծանր ապագայ մը պատրաստել ըսել է ամենայն կերպիւ Զեր հլու հպատակ Հայոց ազգին համար, քանի որ այս խնդիրը որ զուտ կրօնական է երթաւովերթալովքաղաքական կերպարանք առնելով Հայոց Ազգին միակ միսիթաւութեան միացած սեփականութեն

իրաւունքին սաստիկ հարուած պիտի պատճառէ, և նոյն հարուածէն ահաւգին վէրք մը անբուժելի, զոր բժշկելու համար ձարտար և ամենաճարտար բժշկի պէտս պիտի ունենամք եթէ կարողանամք երբէք գտանել . Ո՞ի, Տեարք իմ, խնդրեմ մի եւս ստիպէք զիս այդպիսի աղէտից սկզբնապատճառ ըլլալու . ինձ համար ահա օր յարմար և ահա ժամանակ վիրութեան . և այս է իմ խօսքիս սկիզբն և վերջն, այսինքն ոչ երբէք կրնամը ընդունել | ատինաց գալը պատարագ մատուցանելը իմ սեպհական տուրբ Հիւղեցիս մէջ, որ միայն Հայոց ազգին սեփական ստացուածքն է :

Դարձեալ վերջացաւ ժողովն առանց որոշ վճիռ ինչ տալու :

(Հարունակելի)

## Ա.03Ս ԵԽ ԶԱՐԳԱՑՈՒՄ

(Հարունակութիւննել վերջ, տես թիւ 2.)

Յետնահատակութեան Վ արդանանց, կը հոլովին գարեր, կը սահին տարիներ, կը յաջորդեն խաւար գարեր և տարիներ, յորս ամբողջ Հայաստան գրեթէ տգիտութեան շնորհիւ կը լուզա արեան և աղետից ծովու մը մէջ :

Վ. յս դարուց մէջ կ'ունենայ Հայաստան արիւնը ըլլուշտ վատ Բուզաներ, ազգադաւ և Հայ մատնիներ, որնցմէ լոյսը՝ սոսկալով կը փախչի և լերանց խորշերու և ծերպերու մէջ կ'երթայ աղաստանիլ, լեռներու գագաթներ յանկարծ լուսարաններ կը հաստատուին (1). լուսով բորբոքեալ վառվառն էակներ հոնդիմելով կ'ուիւ

(1) Լուսարան ըսելով վանք պէտք է իմանալ,

